ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, (0224) 2-11-10, yeghvard.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 64-Ն

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

1.Պետական բյուջեից <<Եղվարդի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի և <<Զորավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքերի հիմնանորոգման, Զովունի գյուղի խմելու ջրագծի կառուցման համար կատարվող ներդրումների, ինչպես նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող <<Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակներում Եղվարդի համայնքապետարանում քաղաքացիների սպասարկման գրասենյակ ստեղծելու ծրագրին ներդրում կատարելու նպատակով Եղվարդ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի << Եղվարդ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 79-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Բյուջեի եկամտային մասում՝

ա. պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<99299.4>> թվով.

բ. համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<9501.0>> թվով:

2) Բյուջեի ծախսային մասում ՝

ա. 1.1-1 ծրագրի 5113 հոդվածի <<143016.0>> թիվը փոխարինել <<234221.4>> թվով.

բ. 6.3-1 ծրագրի 5112 հոդվածի <<26927.0>> թիվը փոխարինել <<42371.0>> թվով.

գ. 1.6-1 ծրագրի 5122 հոդվածի <<6158.0>> թիվը փոխարինել <<8309.0>> թվով:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐԺԻԿ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԱՎՐԵՆՏԻ

ԶՈՀՐԱԲՅԱՆ ՌԱՖԻԿ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՍՐԱՊ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳՈՌ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՊԵՏՐՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ